

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԳՐԻԳՈՐ ԲԱԿՈՒՐՅԱՆԻ «ՍԱՀՄԱՆՔ»-Ի ՀՈՒՆԱՐԵՆ ԵՎ ՎՐԱՑԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պ. Մ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Տայքի և Կղարջքի հայ քաղկեղոնականները, սալար հատված յինելով հանդերձ, ավելի շուտ կանգնեցին ապավայնացման առաջ, մասնավորապես VIII դարի կեսերից սկսած, թեև երբեք էլ այն բացարձակ չդարձավ:

Այս շրջանից սկսած, մատենագրության մեջ երևան են գալիս նոր հասկացողություններ, մասնավորապես՝ հոռոմ ասելիս այժմ նկատի ունեն ոչ թե միայն հույներին (բյուղանդացի), այլ նաև՝ քաղկեղոնական հայերին, այստեղից էլ ունենք՝ հայ-հոռոմ, ծաթ անունները: Ոչ թիչ հայ մտավորականներ, գործիչներ այս շրջանում իրենց վրացի են կոչում, դրա տակ վրացադավանություն (քաղկեղոնականություն) հասկանալով: Ուստի նշված շրջանի մշակույթի պատմության ուսումնասիրությունը ունի լրացուցիչ բարություններ և համապատասխան դժուշակություն է պահանջում:

Տայքի ու Կղարջքի վարչական-քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմությունն ուսումնասիրելիս հնարավոր չէ սահմանափակվել միայն հայերեն գրված հուշարձանների հաղորդած տեղեկություններով: Այս պակասը լրացվում է վրացերեն և հունարեն սկզբնաղբյուրներով: Այլալեզու աղբյուրները կարելի է բաժանել 4 խմբի. ա) հայերեն գրված և ապա թարգմանված հունարենի (երբեմն հայերեն բնագիրը չի պահպանվել), բ) հայերեն գրված թարգմանված վրացերենի (հայերեն բնագիր որոշ դեպքում չի պահպանվել), գ) վրացերեն գրված, դ) հունարեն գրված: Ուշագրավ է նաև մի այլ հանգամանք. հայերեն, վրացերեն և հունարեն գրված աղբյուրներն ու գրական հուշարձանները հավասարապես վերաբերում են ինչպես հայ, այնպես էլ վրաց և հունական մշակույթի պատմությանը:

XI դարի հայոց, վրաց և հույների քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության ամենաարժանահավատ ու բովանդակալից աղբյուրներից մեկը Գրիգոր Բակուրյանի հեղինակած «Սահմանք»-ն է¹: Այն բանասիրությանը հայտնի դարձավ անցյալ դարի վերջերին՝ 1888 թ. Գ. Մուսեոսը (G. Musaeus) հրապարակեց «Սահմանք»-ի նոր հունարեն թարգմանությունը՝ 1904 թ. I. Պը-

¹ Հունարեն τσιχον-ը թարգմանվում է նաև՝ մաշոց, ծիսարան, կանոնգիրք, խրատք, ճիշտը՝ սահմանք, ժամանակակից հայերենով՝ կանոնագրություն:

² «Սահմանք»-ի գոյության մասին առաջին հաղորդել է Պ. Բեզորրազովը. տե՛ս նրա Материалы для истории Византийской империи I, ЖМНП, 1887, ч. 254, ноябрь, էջ 65—78. Բակուրյանին վերաբերող՝ էջ 76—77:

³ «Dissertatio philologica» շարի IV պրակում, Lipsiae. հմտ. Н. Я. Марр. Аркаун..., էջ 17 և ն. ցանցի թիվ 30-ը, ճշգրտությամբ, հատ. V, էջ 91: Մանի գնահատմամբ նոր հունարեն այս տեքստում կան «серьезные неточности и даже искажения в наиболее существенных местах» (նույն տեղում):

Հայկական աղբյուրներից Բակուրյանի ազգության մասին խոսում է Մատթեոս Ուռհայեցին, ըստ մաննայնի՝ հաստատելով «Սահմանք»-ի վերոբերյալ տեղեկությունը. («...Գրիգոր՝ Բակուրյանին որդին՝ վրացի ազգա...»)⁷։

Հին վրացական աղբյուրներից Բակուրյանի մասին խոսում է Դավիթ Շինարարի պատմության հեղինակը, նրան կոչելով «զորավար արևելից» (ზორვარი აღმოსავლისა), բայց առանց ազգային պատկանելությունը նշելու։ Բյուզանդական աղբյուրներում, մասնավորապես Աննա Կոմնենայի *Alexiadis*-ում, Բակուրյանը ներկայացվում է իբրև *γένος ἰαυαργον* *ἐξ Ἀρμενίων* *οὐρμυριευνος* — սերված հայոց պալծառ (անվանի) տոհմից։

Սկզբնաղբյուրների այս հակասականությունը⁸, բնականաբար, իր կնիքը կթողնի հետագա մասնագետների եզրակացությունների վրա։ Պ. Բեկորրազովը նրան վրացի է համարում «...Ктитор был грузином, а потому и монастырь предназначался для грузин»⁹։

Դ. Մուսնոսը դժվարացել է լուծել «Սահմանք»-ի հակասական տեղեկությունը (Բակուրյանը բաղմիցս հավաստում է իր «ազգալ վրացի» լինելը, բայց ստորագրում է «նայեցեն գրով»), ուստի, տեքստը հրատարակելիս, ստիպված է եղել հարցական նշան դնել վերջին արտահայտությունից հետո։ Լ. Պտին Բակուրյանին համարում է վրացի, Ն. Մառի դիտողությամբ՝ «не смущен несколько его армянской подписью»¹⁰։

Բակուրյանին վրացի է համարում նաև Գելցերը¹¹։

Այս տրադիցիոն հայեցակետը վերանայվեց Ն. Մառի կողմից, որը հայ քաղկեդոնականության պատմությանը նվիրած իր հայտնի մենագրության մեջ անդրադարձավ այլոց համար անհասկանալի այդ առեղծվածին, հաստատելով, որ «Очевидно, сам основатель грузинского монастыря Петрицона, халкедонит, был армянин по крови, по происхождению. Безукоризненно верно в этом отношении свидетельство Анны Комниной...»¹²։

Հարցը, թվում է, արդեն պարզված էր, այսինքն՝ Գրիգոր Բակուրյանը ազգությամբ հայ է, բայց քաղկեդոնական ու վրացականացող միջավայրից (Տայքից), այդ պատճառով էլ իրեն վրացի է կոչում։ Տվյալ դեպքում «վրացի»-ն հոմանիշ է «վրացառավան»-ին։

Բայց վերջերս, հունարեն նոր տեքստի և վրացերեն խմբագրությունների հայտնաբերումից հետո, Գրիգոր Բակուրյանի ազգային պատկանելությունը և «Սահմանք»-ի ինչ լեզուներով գրելու հարցը նորից քննության առարկա դարձավ։ Ակադ. Ա. Շանիձեն 1958 թ. հրապարակած հաղորդման մեջ¹³ գտնում է, որ «Սահմանք»-ի բնագիրը գրվել է միայն հունարեն ու վրացերեն, այսին-

7 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1858, էջ 148։

8 Աղբյուրներից այստեղ վկայակոչում ենք միայն Բակուրյանի «ազգալ հայ» կամ «վրացի» լինելու մասին հաղորդում պարունակողները։

9 Պ. Բեկորրազով, նշվ. աշխ.։

10 II. Պ. Մարր, Аркаун., էջ 20, ծան. 2։

11 Լ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 318։

12 Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 21։

13 А. Шанидзе, Страница из историята на грузинно-българските културни взаимоотношения, Исторически преглед, ч. XIV, № 4, 1958, էջ 103—104։ Ձեռքի տակ չունենալով հոդվածը, տեղեկությունները բաղում ենք Գ. Գ. Լիտավրինի դրքից, էջ 98—99, ծան. 183 (տե՛ս ստորև)։

քրն՝ սկզբնական ու ճիշտ է համարում վրացական խմբագրության վկայությունը, իսկ «հայերեն գրելու» վկայության առկայությունը հունարենում՝ հետագա լրացում: Գ. Լիտավրինը, վկայակոչելով նախորդ բանասերների դիտողությունները և հարցի քննությունը իր նպատակից դուրս համարելով, նկատել է, սակայն, որ «может быть, вопрос этот гораздо сложнее»¹⁴:

Պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլին իր նշված աշխատության առաջարանում ու ծանոթագրությունների մեջ քննության է ենթարկում, ի թիվս այլ հարցերի, նաև՝ Գ. Բակուրյանի ազգային պատկանելության ու «Սահմանք»-ի ինչ լեզուներով գրելու խնդիրը և գալիս հետևյալ եզրակացության. «Սահմանք»-ի վրացերեն խմբագրությունն ավելի անփոփոխ է պահել բուն տեքստը, քան հունարենը: Հայերեն գրելու անհրաժեշտություն առաջացել է վանքի հիմնադրումից (=«Սահմանք»-ի հեղինակումից) 20—30 տարի հետո, երբ միաբանություն են ընդունվել քաղկեդոնական հայեր: Հետևաբար Բակուրյանը հեղինակել է ոչ թե երեք լեզուներով՝ հունարեն, վրացերեն և հայերեն, այլ երկու՝ վրացերեն և հունարեն: Ըստ որում, «...15. Այնպես է երևում, կարծես հունարեն տեքստի կազմողը կարող էր ձեռքին ունենալ վրացերեն տեքստը: Բրբե սրա ապացույց գուցե կարելի է համարել հունարեն խմբագրության տեքստի վրացարանությունը՝ հանձինս լւղւն-ի (տե՛ս ստորև՝ «Բառարանում»):

სხუაჲ მწუანე მონაჲ კეფი ერთი
[մեկ ուրիշ կանաչ մին ալ սափոր]
επερον σεπτιον πρασινον το λεγόμενον λυγα
[Այլ սափոր՝ կանաչ, մենա կոչվող]:

(էջ 275—276)

Պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլին «Սահմանք»-ի «ազգալ վրացի եմ», «վանքիս միաբանները վրացիներ են» և նման այլ արտահայտություններն ընդունում է ուղղակի նշանակությամբ, որը և կանխորոշել է հետագա քննությունը: Անվանի բյուզանդագետի ուշադրությունից, ցավոք, վրիպել է Մառի «Αρκαυν...» աշխատությունը, որը կարող էր մեծապես օգնել այս ոչ հեշտ հարցի լուծմանը¹⁵:

Հրատարակիչն, իր վարկածն առաջարկելով հանդերձ, անհրաժեշտ է համարել նկատել. «Սակայն այս ամենը նախնական խոսք է. վրաց խմբագրության տեքստի նոր հրատարակությունն ու նրա ուսումնասիրումը՝ հունական խմբագրության տեքստի համեմատությամբ, անշուշտ շատ նոր բան կտա՝ վերևում դրված հարցերի լուծման համար»¹⁶:

Առաջադրված վարկածին պատասխանելու համար նորից անդրադառնանք Գրիգոր Բակուրյանի ազգային պատկանելության խնդրին: Վերևում մենք թրվարկեցինք հարցին վերաբերող սկզբնաղբյուրները՝ իրենց հակասական տեղեկություններով:

¹⁴ Г. Г. Литаврин, Болгария и Византия в XI—XII вв., М., 1960, էջ 80.

¹⁵ Վրաց «ლიტერატურული საპრობლეო» թերթում (1964, 1 մայիսի, № 18, էջ 4) լույս տեսած «Գրիգոր Բակուրյան» հոդվածի հեղինակը (Օթար Գվինչիձե) շտապել է բանասիրական ճշտումների կարոտ հարցը իրրե անվերապահ ճշմարտություն ներկայացնել, անտեսելով Մառի ապացույցումները: Հոդվածագիրը անհասկանալիորեն Աննա Կոմեննայի վկայությունները առկոչելիս բաց է թողնում միևնույն նախադասության երկրորդ մասը, որ ասվում է, որ Գրիգոր Բակուրյանը գտնում էր հայոց պայծառ տոհմից: Մանրամասն տե՛ս ստորև:

¹⁶ Ս. Ղաուխչիշվիլի, նշվ. աշխ., էջ 276:

Բակուրյանի հայազգի լինելը հաստատվում է ստորև վկայակոչվող աղբյուրներով:

ա) Դեպքերին ու անձնավորություններին քաջագիտակ Աննա Կոմնենան, նկարագրելով իր հոր՝ Ալեքսանոսի (*Ἀλέξιος Κομνηνός, 1081—1118*) վարած կռիվներն ու դահակալության պատմությունը, հատուկ ուշադրությամբ է խոսում Բակուրյանի մասին՝ նրան «հայոց պայծառ տոհմից սերած» ճանաչելով (*...αὐτὸς ὁ ἐστὼς μικρὸς τὸν θεῖμας κατὰ τὸν ποιεῖται, πλὴν ὡς γένους ἀμπεροῦ ἐξ Ἀρμενίων ὀριωμένον*)¹⁷:

Աննա Կոմնենան հարկավ տարբերում էր հայ և վրացի ազգային պատկանելությունը: Այս աղբյուրի առավելությունն այն է, որ ազգությունը ներկայացվում է ոչ դավանանքով, այլ բուն պատկանելությամբ: Ուրեմն՝ Բակուրյանը, ըստ այս վկայության, հայազգի էր:

բ) Գրիգոր Բակուրյանի հեղինակած «Սահմանք»-ի 36-րդ գլխում («Մեր վանքում գտնվող ու պահվող ոսկեղորշմաների մասին») կա մի այնպիսի տեղեկություն, որը կարևոր բանալի է հարցի էությունը քննելիս:

*Χρυσόβουλλον τοῦ εἶναι με ἐπ' αὐτοῖς
παραπεμπῆσαι τὰ κτερίματα μου ἐν ἡμῶν καὶ
βουλομαι, καὶ πρὸς τοὺς συγγενεῖς καὶ
ἀνθρώπους μου, καὶ τῆς ἡμετέρας τῶν
Ἀρμενίων τυγχάνουσιν*¹⁸

Ոսկեղորշմ (մսաանի) առ այն, որ
ես իրավունք ունեմ փոխանցելու
(տրամադրելու) իմ տիրույթները ուր
էլ կամենամ, իմ հարազատներին
կամ ծառայոց՝ քեկուզ նրանք հա-
յոց դավանանքի լինեն:

Նշանակում է՝ Գրիգոր Բակուրյանը առանձին հրովարտակ է ունեցել իր կալվածքները հետագայում որևէ մեկին ժառանգելու իրավունքի մասին: Ինչ խոսք, հայադավան ազգականներ (հարազատներ) միայն հայազգին կունենար, որովհետև պատմությանը հայտնի չէ որևէ փաստ, ըստ որի XI դարի Տայքում (ինչպես նաև մեկ-երկու դար առաջ) միաբնակ (հայադավան) վրացիներ լինեին¹⁹: Իսկ որ X—XI դարերում համատարած քաղկեդոնականացող (վրացադավան կամ հունադավան) այս աշխարհում դեռևս կային միաբնակ հայեր՝ ապացուցվում է «գալառակալ» Եվստաթիոս Բոյիլասի «Կտակ»-ով: Բոյիլասը հաստատվել է Տայքում²⁰ և հանդիպել այլադավան ժողովրդի. «Հաստատվելով այլ հավատք պաշտող և ուրիշ լեզվով խոսող ժողովուրդների մեջ, ես արժանացա...»²¹, կամ նույն կտակի վերջում նա սպառնում է ազգականներին ու ժառանգներին, անշուշտ Տայքում բնակվող, զրկել կալվածքներից եթե չորևէ մեկը ճիշտ ուղուց շեղվի և ուղղափառ հավատից անցնի օտար,

¹⁷ Anna Comnena, Alexiades, Bonnae, 1839, էջ 96 (Corpus scriptorum historiae Byzantinae). Աննա Κομνηνα. Алексиада, вступительная статья, перевод, Комментарий Я. И. Любарского, М., 1965, էջ 97, նաև՝ էջ 163, ծան. 202.

¹⁸ ԾՅԹԾՅԾ, V, էջ 230—231.

¹⁹ Հանգուցյալ Ն. Ակինյանը Գ. Բակուրյանին «հայրենօք հալածելն Տայքացի կամ Գուգարացի» է համարում (Ն. Ակինյան, Սիմէոն Պղնձահանեցի և բր թարգմանությունները վրացերենի, Վիեննա, 1951, էջ 19): Ժիշտը տայեցի լինելն է:

²⁰ Այդ ճշտվում է կտակում եղած տեղանուններով:

²¹ Հ. Բարթեկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր աղբյուր, «Բանբեր մատենադարանի», N 5, էջ 411:

համարվի), որ XI դարում այդ տիտղոսը օտար չէ նաև արևելյան Վրաստանին³¹, Վրաց Բագրատ IV-ի նշանավոր հրովարտակը, ուղղված մամուստիլիսներին և տանուտերերին, տառացիորեն վկայում է, որ տանուտերությունը եղել է (հիմնականում) Տայքի ու Կղարջքի հայոց պատիվներից, հավասար տարածում չունենալով նույնիսկ մերձավոր Սամցխեում: Այդ նշանակում է, թե «տանուտերությունը» Վրաստանում (XI դ.) սահմանափակ կիրառում է ունեցել, ավելի ճիշտ, շրջանակվել է վրացականացող հայոց սահմաններում:

Արդ, ո՞ւմ է վերաբերում Գրիգոր Բակուրյանի «որին վրացիք տանուտեր են կոչում» արտահայտությունը: Հարկավ տանուտերությունը վերաբերում է Տայքին (և Կղարջքին): Ուրեմն այս դեպքում «վրացիներ» ասելով ամենից առաջ վրացագավան միջավայր է հասկանում, անկախ բուն աղգությունից: Այս մեկնությունը ապացուցվում է նաև «Սահմանք»-ի հին վրացերեն խմբագրությամբ: Այստեղ «ჯანთხედა»-ի դիմաց ունենք «ოსტოგადი» («ոստիգան»-ի): Եթե վրացիք իսկապես «տանուտեր» էին կոչում, ապա ինչու՞ վրաց խմբագրության մեջ չի պահպանվել այդ ձևը, այլ փոխարինվել է «ოსტოგადი»:

Այսպիսով, Գրիգոր Բակուրյանը հալյազգի է, փոքրեղևական, տայքցի³²:

Այժմ անդրադառնանք «Սահմանք»-ի երեք լեզուներով հունարեն, վրացերեն և հայերեն գրվելու խնդրին, որի շուրջ, ինչպես վերևում տեսանք, պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլին միանգամայն նոր և ինքնատիպ վարկած է առաջադրում. հունարեն բնագրի «հայերեն», «և հայերեն» արտահայտությունները ոչ սկզբնական համարելով, այլ հետագա հավելում՝ նոր պայմաններով թելադրված:

«Սահմանք»-ը գրվել է վանքի կառուցումից (1083 թ.) մեկ տարի հետո՝ 1084 թ. (6592—5508=1084), ղեկավարելով ամսին: Ակադ. Ն. Մառը հակված էր կարծելու, որ 1083 թ. Պետրիծոնի վանքը ոչ թե հիմնադրվել, այլ վերանորոգվել է³³:

Ն. Մառի օգտագործած սկզբնաղբյուրը՝ հնարավորություն չի տվել ճշտելու հիշատակարանի պատկանելությունը³⁵, մասնավորապես այն, որ 1030 թ. վկայող հիշատակարանը պատկանում է ոչ թե թարգմանչին, այլ հեղինակին՝

³¹ «Տանուտերության» մասին մանրամասն և ուշագրավ դիտողություններ ունի Ն. Մառը (Аркаунов., 22—24): Նա ապացուցում է, որ այս ինստիտուտը հատուկ ճանաչում ուներ Տայքում ու Կղարջքում, իրեն հետևանք հալ բնակչության այդ հատվածի ապագայնաջման:

Մանգլիսի տաճարի ալեանագրություններից մեկում, որի վերջնությունը երկար ժամանակ թերի է համարվել (Բրուսե, Թաղաշվիլի, Շանիձե), Թ. Բարնավելու ընթերցմամբ (տե՛ս տ. ծանոթություն, Մանգլիսի ժամանակահատված, տե՛ս, 1961, էջ 3—6) գործածված է «տանուտեր» (ტანუთერი) տիտղոսը:

³² Ինչպես մեկ անգամ նշել ենք, Իսախան Կուրուպաղատի պատվերով արարեցներից հայերեն եատարված թարգմանությունները պերճախոս վկայում են, որ X—XI դարերի Տայքում ու Կղարջքում ոչ միայն միաբնակ հայեր կային (քաղկեդոնականների մասին խոսելն ավելորդ է), այլև հայոց լեզուն այնքան կենդանի էր ու տարածուն, որ «առաջի թագաւորացն ու իշխանացն» պատմելու կամ ընթերցելու համար հայերեն էին թարգմանում: Հմմտ. Պ. Մուրադյան, «Պատմություն Պղնձե քաղաքի» գրույցի հայկական և վրացական պատումների ու նրանց փոխհարաբերության շուրջ, «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 250 և 258:

³³ Н. Марр. Аркаунов., էջ 17, հմմտ. էջ 24, ծան. 1, հմմտ. სოქნი Иосиф Петрицкий, грузинский неоплатоник XI—XII века, СПб., 1909, էջ 2:

³⁴ Այն է՝ տ. ქოროდაბი, ქრონოგეზი, I, էջ 310—311:

³⁵ Հիշատակարանի վերահրատարակությունը տրված է Վրաստանի ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի Տ. հավաքածուի նկարագրության մեջ՝ ქართული ხელნაწერთა აღწერილობა, S, ტ. II, თბ., 1961, გვ. 219:

Նիկոն Մենակյացին, ինչպես լուսանցագրությունն է հավաստում՝ տշտ ամիս լուրիսնա մամիսն սայոտեաշտա ամատ աստուղությունսա՝ արև անդերծի ցեց «սույն հիշատակարանը հենց այս քարողների հեղինակին իրեն՝ արժանավոր սուրբ հորն է պատկանում»³⁶։ Դավիթ Պետրիժոնեցու մասին խոսվում է Արսեն Իղալթոյեցու թարգմանած «Քակտումն հայոց հավատի» (հեղինակ՝ Նիկոն Մենակյաց) հիշատակարանում, որ կարևոր է նաև Պետրիժոնի վանականների պալլարի արտացոլմամբ՝ հակաբաղկեղոնականության դեմ, այսինքն՝ միաբնակ հայոց։

Լույսը ցավոք, մամանո, արսենիսա-տշտ տարեմանիս ըս ըստիտիստշտ թեթրոնոնեղիսա մոնաշոն-նեցիսա, իրոմիսն ուղղեցիտա ծործուլիսա՝ ցածրադարձուլեցիտա նեցիտա ցեց սիտ-յաշոնի սոմեցիտա ցածրադարձուլեցիտա։

Ուլ հարք, աղոթեցեք թարգմանչիս՝ Արսենիս, և Դավիթ՝ Պետրիժոնեցի կրոնավորի համար, որի ստիպմամբ (ղրղմամբ) հունարենից թարգմանեցի հայոց [հավատը] քակտող այս հինդ ճառերը (քարողները)։

Արսեն Իղալթոյեցին մահացել է 1125 թ. հետո, որովհետև նա է հեղինակել Դավիթ Շինարարի (մահ. 1125) չափածո տապալանագիրը, ուրեմն՝ 1030 թ. թարգմանության մասին խոսք լինել չի կարող։ Դավիթ Պետրիժոնեցին Արսենի ժամանակակիցն է և այդ տեղանունով կարող էր կոչվել միայն 1083 թ., այսինքն Գրիգոր Բակուրյանի վանքի հիմնադրումից հետո։ Պետրիժոնի վանքի հիմնադրման և ոչ վերանորոգման մասին են վկայում «Սահմանք»-ի ներածության հետևյալ արտահայտությունները. «կառուցեցի ես՝ Գրիգորս», «հիմնադիրն եմ այս աստվածաշեն և նոր վանքի...»³⁸։ Անկասկած է, որ Պետրիժոնի ա. Աստվածածնի վրաց վանքը հիմնադրվել է Գրիգոր Բակուրյանի կողմից, և 1083 թ. առաջ այնտեղ վրաց հոգևորականության առկայության ն. Մառի վարկածը չի հաստատվում։

«Սահմանք»-ի երեք լեզուներով գրված լինելու հանգամանքը Մառի օրոք հատուկ քննության առարկա չէր կարող դառնալ, որովհետև դեռևս անհայտ էր հին վրացերեն խմբագրությունը։ Այժմ, երբ գիտությունը հայտնի է դարձել վրացերենը՝ հունարենից տարբերվող հաղորդումներով՝ քանի լեզուներով գրելու մասին, հարցը ավելի է բարդանում։ Ինչպես տեսանք, արոֆ. Ս. Ղաուխչիչ-վիլին կարծում է, որ սկզբնապես միայն վրաց համար կառուցված այդ վանքում հայեր չկային և, բնականաբար, չկար նաև հայերեն գրելու անհրաժեշտություն։

Բայց հունարեն և վրացերեն տեքստը որոշակի կուլաններ է տալիս մտածելու, որ նախնականը և ձիշտը երեք լեզուներով՝ հունարեն, վրացերեն և հայերեն գրելն է։ Այժմ անդրադառնալով այդ կուլանների քննությանը, հիշելով, որ Բակուրյանը հայազգի էր, տայեցի, քաղկեդոնական։

³⁶ Ձեռ. S—1463, էջ 281r (ըստ նկարագրության S—11, էջ 219, § 33), հմտ. Յ. ԵՅԵՄ-ԼՈՒԺԵ, ԵՅՐՈՒ. ԼՈՒԺ. ՈՍԺ., Ժ. 1¹, 83. 417—280.

³⁷ Յ. ԵՅԵՄ-ԼՈՒԺԵ, ՆԶԳ. աշխ., էջ 279, ըստ Գելաթի վանքի (այժմ Քութաիսի թանգարան) № 23 ձեռագրի, էջ 266r: S—1463 ձեռագիրը այս հիշատակարանի փոխարեն 264v էջում ունի ուրիշը (Յ. ԵՅԵՄ-ԼՈՒԺԵ, ՆԶԳ. աշխ., էջ 278—279), որ նկարագրության մեջ (S—11, էջ 218, § 40) չի արտացոլված։

³⁸ Հունարեն բնագիրը նոր վրացերեն թարգմանության առկայությամբ տե՛ս ՅՅԵՄԵՅՈՅԵ, V, էջ 98—99, § 2: Հին վրացերեն խմբագրության վկայությունը տե՛ս Typicon Gregorii Pacurlant, edidit Michael Tarchnitsvili, Louain, 1954, tomus 3, § 2.

ա) «Սահմանք»-ում հատուկ ընդգծմամբ ասվում է, որ Պետրիժոնի վանականները վրաց գրչության և խոսակցական լեզվի գիտականեր են (...παιδων των μοναχων των τῆν ἐβγρικῶν ἐπιστολῶν γράψαν καὶ διαλέκτων συνανθισσῆν των...)՝³⁹ Բնականաբար հարց է առաջանում. միջնադարում կա՞ր որևէ մենաստան, որի միանձիք, սարկավազներից մինչև առաջնորդը, գրել-կարդալ չիմանային։ Կարող էին լինել անգրագետ քահանաներ, երեցներ կամ տիրացուներ (սակավաթիվ), բայց այստեղ խոսքը վանքին է վերաբերում միջնադարյան գրչության կենտրոնին և ոչ որևէ եկեղեցու կամ մատուռի։ Այդ պատճառով էլ Բակուրյանի այս հայտարարությունը, վրացերեն գրել-կարդալու և խոսելու կարողության մասին, ինչ որ հատուկ պարագաներով պետք է թելադրված լինի։ Մասնավորապես՝ վանքում պետք է լինեին նաև այլազգի հոգև-վորականներ, միաբանությունը պետք է տարբեր ազգերի մարդկանցից բաղկանար, որպեսզի անհրաժեշտ լինել շեշտել վրաց լեզվի ու գրչության իմացությունը։ Վանքում հատուկ նկատառումով բացառվել է հույների ընդունումը։ Ուրեմն իբրև այլազգի կարող էին միայն հայերը լինել, տայեցի՝ քաղկեդոնական և Բակուրյանի պես իրենց՝ վրացադավանությամբ «վրացի» համարող հայեր։

բ) «Սահմանք»-ի 24-րդ գլուխը վերաբերում է վանքում հույն վանական շրջանակներին՝ «երբեք իմ այս վանքում հույն վանական կամ արեղա շրնակվի, բացառությամբ մեկ դպրի» (...εἰ μὲν μόνον νοτερον)⁴⁰, այնուհետև տրվում է այդ վճռի պատճառաբանումը։ Բակուրյանը բյուզանդական դոմեստիկոս էր, հպարտությամբ է նշում իր ծառայությունները, ստացած «ոսկեդրոշմները», բայց, այնուամենայնիվ, արգելում է հույների բնակությունն իր մենաստանում, թեև խոստովանում է, որ «հավատքի հարցերում մենք հետևում ենք նրանց իբրև ուսուցիչների և ընդունում նրանց ղոգմաները»։ Հայերի մասին ոչինչ չի ասվում։ Պատմությունից հայտնի է, որ XI դարի Ֆիլիպոպոլսում (այժմ՝ Պլովդիվ, Բուլղարիա), որի մոտ և կառուցված է Պետրիժոնի վանքը, շատ հայեր կային։ «Вся страна в окружности Филиппополя в XI столетии была переполнена армянами, богомиллами и павликянами», — գրում է Իրեչեկը⁴¹։ Հայերի, մասնավորապես բողոքիկների ու պավլիկյանների ստիարության մասին հավաստի տեղեկություն կա Աննա Կոմնենայի մոտ. նկարագրելով Ֆիլիպոպոլիսն ու նրա շրջակայքը⁴², ի թիվս այլ կարևոր տեղեկությունների նա հաղորդում է. «Ἀρμένιοι τε γὰρ διενεμειμάντο τὴν πόλιν παύτως καὶ οἱ λεγόμενοι Βούγιοι, περὶ ὧν ὕστερον καὶ αὐτῶν καὶ τῆς τοῦτων αἰρέσεως ἐροῦμεν κατὰ καιρὸν, καὶ οἱ καὶ οἱ διωκόμενοι Παυλικιανοί, τῆς Μανιχαϊκῆς ἀποσπᾶσαι τυγχάνοντες, ἐκ Παυλῶν καὶ Ἰωάννων, ὡς καὶ τὸ νόημα λέγει, γεγεννημένοι, οἱ τῆς ἀσεβείας τοῦ Μανεντος ἐπιστολαῖς ἀφ' αὐτοῦ τῶν ἀπ' ἐκείνων μεταδεδωκασιν»⁴³։

Այս տեղեկությունը հաստատվում է նաև Թեոֆիլակսի թղթերով և առհասարակ շատ աղբյուրներով։ Ակադ. Ն. Մառը Պետրիժոնի վանքի հիմնադրումը

³⁹ ԾԾԾԾԾԾԾԾ, V, էջ 98, 18—20։ Հին վրացերեն խմբագրության մեջ այս մասը բացակայում է (§ 2)։

⁴⁰ ԾԾԾԾԾԾԾԾ, V, 23, 218, § 1—2, Թարգմ. էջ 219, § 1—2։

⁴¹ К. Иречек, История болгар, перев. Ф. К. Брука и В. Н. Палаузова, 1878, էջ 281, հիմա. М а р р, նշվ. աշխ., էջ 25։

⁴² Alexiadis, vol. II, էջ էջ 297, նաև՝ 295—302, հիմա. Алексиада, էջ 303։

⁴³ Նույն տեղում, էջ 297։

ամենից առաջ առնչում էր բողոմիլների ու պավլիկյանների դեմ տարվող և ծրագրվող պայքարին⁴⁴։

1081 թ. հոկտեմբերի 19-ի Դրաչի նորմանա-բյուզանդական ճակատամարտում Բյուզանդիայի բանակում եղած հայ պավլիկյաններն ու բողոմիլները կայսրին անակնկալի բերին՝ նույնիսկ գերության մատնելով Գրիգոր Բակուրյանին։ Միանգամայն բնական է, որ հենց այդ թվականից սկսած Պետրիժոնի վանքի շինարարությունը նպատակ կունենար խախտելու պավլիկյանների ու բողոմիլների դիրքերը։ Կարևոր այդ խնդրին պակաս մասնակցություն չպիտի ունենային Ֆիլիպոպոլսում ու նրա շրջակայքում բնակվող հունադավան կամ վրացադավան հայերը։ Բանասիրությանը այժմ հայտնի է, որ հայ քաղկեղոնականները ամենից ավելի հուսալի մարդիկ էին՝ ինչպես միաբնակության, այնպես էլ (և հատկապես) պավլիկյան ու բողոմիլյան աղանդավորների դեմ պայքարելու համար. «Этих наших братьев, как только среди них оказывается кто с божественным разумом, и доднесь отцы наши и патриархи берут с Богом на борьбу с врагами, когда на соборе возбуждается что-либо против армян еретиков, так как они сведущи в их языке и писаниях. И недавно еще при блаженных патриархах в наше время случилось, как некоторые из них, в весьма малом количестве, на соборе не дали отнюдь еретикам (армянам) и языком шевельнуть или слово испустить против православных, хотя еретиков армян было весьма много»⁴⁵։

Հայ քաղկեղոնականները ավելի մեծ եռանդով նույն ծառայությունը կատարեցին պավլիկյանների դեմ մղվող պայքարին, եթե նույնիսկ կարծենք, որ հունա-սլավոնական այս աղբյուրի վկայությունը «հերետիկոսներ» ասելով կարող է նաև այլադեմ «միաբնակ» հասկանալ։ Եվթիմեոս Զիդարենոսի (XII դ.) պավլիկյանց դեմ գրած տրակտատը Պետրիժոնում թարգմանվել է վրացերեն⁴⁶, իսկ այդ նշանակում է, որ պավլիկյանց դեմ պայքարելը Պետրիժոնի հիմնադրման դրդապատճառներից մեկն էր⁴⁷։ Վերևում, Դավիթ Պետրիժոնցու մասին խոսելիս, նկատեցինք, որ նրա հանձնարարությամբ Արսեն Իդալթոյեցին դեռևս XI դ. վերջերին թարգմանում է «Քակսուումն հայոց հավատի» հինգ թղթերը։ Պետրիժոնցու հանձնարարությունը հուշում է, որ հայ միաբնակների դեմ տարվող պայքարը ևս Պետրիժոնի վանքի գործունեության ոլորտներից է եղել։ Իսկ այս խնդրում, ինչպես վերևում տեսանք, ամենից շատ հույսեր հայ քաղկեղոնականների վրա էր դրվում։ Ուրեմն՝ Պետրիժոնում ոչ միայն չէր արգելվի հայոց մուտքը, այլև նրանք ներկա կլինեին ի սկզբանե, հայ քաղկեղոնականների այն մասից, որոնք իրենց վրացադավան էին համարում։ Իսկ պատ-

⁴⁴ Н. Марр. Аркаун..., էջ 23—26։

⁴⁵ Տե՛ս Մ ա ու, նշվ. աշխ., էջ 35—36, հմտ. ն. Ա դ ո ն ց. Հայ ծաթերի ծագման մասին, «Հանդես ամսօրյա», 1912, էջ 262—63։ Հոգվածի ուրիշ բնագիրը տե՛ս ЖМНПр., 1911, էջ 238—249։

⁴⁶ Զեռագրի համարը նշվում է ինչպես ն. Մ ա ու (նշվ. աշխ., էջ 26, ծան. 1), այնպես էլ Կ. Կեկելիձեի մոտ (ԳԵՂՈՒԹՅՈՒ ժյցլո ի խոտ. ԼՈՒԹ. ՈՍԹ., V, էջ 53)։ Երկու տեղում էլ՝ S—51, էջ 78 et pass, բայց S հավաքածուի № 31-ում նշված տրակտատի փոխարեն առկա է Վախտանգ VI-ի «Որենսդիրքը» (նկարագր. տե՛ս խոտ. ՅՂԼՈ. ՁԼՖ., S, Ծ. 1)։ Վրացերեն փոխադրությունը պահպանվել է երկու այլ ձեռագրերում, որոնց հիմամբ էլ մենք համեմատական տեքստ ենք պատրաստել՝ համապատասխան ռուսամասիություններով։

⁴⁷ Կարևոր հանգամանք է Բ. Ժորգանիայի հրատարակած զրույցը Ալավերդու (Վրաստանում) ս. Գևորգի խաչի մասին (յՐՈՇՈՅԵԾԻ, էջ 117, հմտ. Մ ա ու, նշվ. աշխ., էջ 26)։

մությունից նման այլ դեպքեր էլ են հայտնի, երբ հայ երկարնականները անդամակցել են հույն դավանակիցներին⁴⁸։ Ի դեպ, 1170-ական թթ. Ֆիլիպուպոլսի հայ երկարնականները, պավլիկյաններից ու բողոմիլներից թեթևանալով, միջնորդ են դառնում Կիլիկյան հայոց ու Բյուզանդիայի միջև՝ եկեղեցական միության առաքելությամբ, որոնցից մեկն էր «ըստ Փիլիպուպոլսեաց հայր վանից Յոհաննէս անուն»⁴⁹, կայսեր կողմից առ ներսես Շնորհալին ուղարկված (թարգմանիչ և պատվիրակ, նույն Հովհաննես Աթման է, «հայր վանացն Հայոց որ ի Ֆիլիպուպոլսեաց աշխարհէն...»)։

Այս ամենը նշանակում է, որ Պետրիժոնի վանքի հոգևորականների վրացերեն իմանալը դեռևս միայն վրացիների միարևմուտքյան վկայությունն է, այլ նաև՝ վրացառավան հայոց։

զ) Գրիգոր Բակուրյանը անհրաժեշտ է համարել ճշտել իր հարադատների ու մերձավորների առնչություններն ու իրավունքները վանքի ու նրա ողջ տնտեսության նկատմամբ։ Վերևում տեսանք, որ Բակուրյանի հարադատները ոչ միայն ազգությամբ հայ են, այլ մասամբ նույնիսկ՝ հայաղավան (միաբնակ)։ «Սահմանք»-ում նշվում է, որ վանքը ազատ պետք է լինի ոտնձգություններից, նույնիսկ եթե դա վերաբերի Բակուրյանի հարադատներին՝ «այժմ առկա (գոյություն ունեցող) և մեղանից հետո եկող» («...και τιμων πανγενικων προσωπων ουκ οντων και των ιερων» Կիլիկյան թեմայում...)»⁵⁰։

Մի այլ տեղեկությունից եզրակացնում ենք, որ վանքում կային կամ կարող էին լինել Բակուրյանին ազգական միաբաններ, որնք ևս կամայականության իրավունք չունեն (լսել է՝ «οι εν τη τοιαυτη μονη μοναχους ετερων τινος οικειω τη πανγενικω τιμων προσωπων εις τε αλλοτριω...»)»⁵¹։ Բայց միաժամանակ նշվում է, որ հոգևորական կարգով ապրող իր հարադատներին առաջնություն է տրվելու, քան «օտար և դրսից եկած» մարդկանց («...υπερ των ξενους και τους εξωτεριχους»)։ Թերևս հնարավոր կլիներ կասկածել, որ «πανγενικω» ասելով Բակուրյանը ոչ թե հարադատներին նկատի ունի, այլ առհասարակ վրացազգի մարդկանց, բայց նույն գլխի հաջորդ հոդվածում նա ինքը ճշտում է. «եթե վերոհիշյալ մեր ազգակիցներից որևէ մեկը, կամ մեր ծառաներից դուրս ուրիշը վրացիներից կլինի և [հոգևորական] կձեռնադրվի, իսկ վանականների կարգյալ թիվը պակասած կլինի, անհրաժեշտ է նրանց տալ առաջնությունը, և նրանք մտնեն վանք և լրացնեն թափուր տեղերը՝ ի լրացումն կարգվածի։ Նրանք պետք է սույն վանքում սահմանված կարգով ապրին, համերաշխ լինեն միաբանության եղբարց հետ և հնազանդվեն վանահորը» (գլ. 25, §3)։ Այստեղից պարզ ի պարզ հետևում է, որ վանքում կարող էին լինել կամ կային Բակուրյանի մերձավորներ, ազգակիցներ (ինչ խոսք՝ քաղկեդոնական)։ Վրացիներին առավելությունը տալը, քան «դրսի» մարդկանց, նշանակում է, որ վանքում կային Բակուրյանին ոչ տոհմակից այլ մարդիկ, ոչ վրացիներ, որոնք վերևում առկոչված տեղեկությամբ դիտեն վրացերեն գրել-կարդալ։ Իսկ այդ վերաբերում է միայն քաղկեդոնական հայերին, որովհետև հունաց մուտքը խստիվ արգելված

⁴⁸ Հմմտ. Մ ա ո, նշվ. աշխ., էջ 26—27 և հտ.։

⁴⁹ Թուղթ Բնդահանական, էջմիածին, 1865, էջ 213, Հմմտ. ն. Ա կ ի ն յ ա ն, Սիմեոն Պղնձահանեցի..., էջ 227։

⁵⁰ Ձ ա լ ա ճ ա ճ ա, V, 200—2 (հին վրացերեն խմբագրությունը տե՛ս Typicon..., t. 3, էջ 48_{16—18})։

⁵¹ Նույն տեղում։ Այլ առիթով իր մերձավորների մասին խոսում է էջ 200 (երիցս)։

էր: Նշանակում է՝ ի սկզբանե Պետրիժոնում կային հայեր, բացի Բակուրյանի ազգականներից նաև՝ «գրսի» կամ «օտար» մարդիկ, հայ ֆաղկեդոնականներ:

դ) «Սահմանք»-ում եղբարց՝ վանքից այն կողմ շանցնելու, վանահոր հրահանգներից դուրս չգալու և առհասարակ պատարագի ու ժամասացության մասին խոսելուց հետո (դլ. 15), Բակուրյանը դրում է.

...ὅτι γὰρ τὴν οὐρανίαν τῆς ἱερατείας ἀγάπη τε καὶ ἀγρυπνία κατὰ νόμον τε καὶ ἡμέραν ἀδιαλείπτως ποιεῖν κατὰ τὴν χάριν τοῦ Θεοῦ καὶ τὴν ὁμολογίαν τὴν παρὰ τοῦ πατρός ὁμοειδῶς ἐκαστὴ γλώσσῃ κατὰ τὸν ἴδιον φθόγγον ἐν Χριστῷ Ἰησοῦ τῷ κυρίῳ ἡμῶν, ὃ τὴ δόξα εἰς τὸς αἰῶνας τῶν αἰώνων, ἀμήν⁵².

«...Անհրաժեշտ է ժամասացությունը կատարել սիրով ու արթնությամբ գիշեր ու զոր անդադար, աստծո վախիլությամբ և փրկչի տված շնորհով՝ յուրաքանչյուր (ամեն) լեզվով՝ առանձնական (իրեն հատուկ, իր) ձայնով (հնչմամբ), առ տերն մեր Յիսուս Քրիստոս, որին է փառքս հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ըստ այս տեղեկության ժամասացությունը կատարվել է ոչ եզակի լեզվով, ոչ միայն վրացերեն, այլ նաև ուրիշ լեզվով, որովհետև հունարենում ունենք «լեզու» և «ձայն», որոնք տարբեր նշանակություն ունեն. ժամասացության (=սաղմոսի) արտացոլումն այստեղ «ձայն» է (φθόγγος), իսկ «լեզուն» (γλώσσα) գործածված է իր բուն նշանակությամբ: Որ այս բացատրությունը ճիշտ է՝ հաստատվում է հին վրացերեն խմբագրությամբ. այստեղ ունենք.

Ջեր արև մսախրեծիս միս տևալ-
մընեծիս ջեքորձա մարմնիս գլուս
մորցինդե մոշժարեծիտ ըս սույա-
րալուտ, տշնիեր Կոջլիս մցնոն-
րեծիս ըղե ըս ըս մարմնիս մի-
սեծր լոմրտիս միեր մալժոջրիս մո-
նիքեծլիս տշտոջլիս յենիս Խմո-
ծար ցալոմիս տաջլիս քրիստե
յեսձս միեր ոշտլիս Խյենիս, լոմ-
լիսա արև լոլոլեծա յեյունիտ յեյունի-
սամլո, ամին⁵³.

«...Հարկ է սաղմոսերգել միշտ ըզգոն արթնությամբ և սիրով, առանց որևէ ծուլացման (հապաղումի)՝ գիշեր ու զոր՝ փրկչի պարգևած շնորհին պատշաճ, յուրաքանչյուր լեզվով օրհնեցում ձայնել առ տերն մեր Յիսուս Քրիստոս, որին է փառքս հավիտյանս հավիտենից, ամեն»⁵⁴.

«Են» — լեզու բառը այստեղ գործածված է բուն նշանակությամբ. «ձայնը» — Խմ-ն է, գործածված՝ «ձայնել» (Խմոծալ) ձևով: Արդ, եթե ժամասացությունը (Թեկուդ միայն սաղմոսերգությունը) կատարվել է ոչ միայն վրացերեն, ապա ո՞րն է երկրորդ լեզուն: «Սահմանք»-ի տեքստից գիտենք, որ մենաստանի վրացիք չէին հունարեն...» (...և ἡ ἐκείνη ἡμετέρα γλῶσσα ἦτορ)⁵⁵, իսկ հույ-

⁵² Նույն տեղում, էջ 190 և 192:

⁵³ Typicon..., էջ 46:

⁵⁴ Վրացական խմբագրության տաճար-ն հունարեն չաբուս (տե՛ր. ВЪДЪВНКА) բառի պատճենում է: Հին վրացական աստվածաբանական գրականության մեջ չաբուս-ին սովորաբար համապատասխանում է լուսնին: Եթե լուսնին համարում ենք, ապա լուսնի մեջ նկատելի ընդգծվում է աշխարհական տիրոջ հասկացողությունը (այս հանգամանքը կարող է օգտակար լինել վրացերեն առկա խմբագրության գոյացման կամ թարգմանության ժամանակը ճշտելիս):

⁵⁵ Գրել-կարդալ շրմանալը բացառում է և «սաղմոսերգումը» հունարեն:

ների ընդունումն արգելված էր, բացառությամբ դպրի, ուրեմն երկրորդ միակ հնարավոր լեզուն հայերենն էր:

Նշանակում է՝ Պետրիժոնում ոչ միայն հայեր կային (բացառապես վրացադավան), այլ նույնիսկ սաղմոսերգություն կար հայոց լեզվով, իսկ այնտեղ միանձնացած հայազգիք դիտելին վրացերեն գրիլ-կարդալ:

Այսպիսով, «Սահմանք»-ի հունարենն ու հին վրացերեն խմբագրություններում, ինչպես նաև Բակուրյանին վերաբերող հունական, վրացական ու հայկական սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները ապացուցում են.

ա) Բակուրյանի հայազգի է. վրացազավան, տալեցի:

բ) Պետրիժոնի վաճառում կային հայ բաղկեղուկականներ, կար հայերեն ժամասացություն:

գ) «Սահմանք»-ի երեք լեզուներով՝ հունարեն, վրացերեն և հայերեն զբեղր միանգամայն պատճառաբանված է, հունական խմբագրության տեղեկությունն այդ մասին՝ ստույգ:

Այժմ, նկատի ունենալով սույն եզրահանգումները, համառոտակի անդրադառնանք «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների փոխհարաբերության հարցին:

Վերևում ասվեց, որ ակադ. Ա. Շանիձեն և պրոֆ. Ս. Ղաուխիշվիլին հունարեն և վրացերեն տեքստերի փոխհարաբերության մասին խոսելիս վրացերեն նորահայտ խմբագրության հունարենից տարբերվող մասը, ըստ էության, ըսկզբնական են համարում: Իսկ այդ տարբերությունը ամենից առաջ վերաբերում է «Սահմանք»-ը «նաև հայերեն» գրելուն և Բակուրյանի հայազգիք ստորագրությանը: Ինքնին հասկանալի է, որ խնդիրը ինչ լեզվով ստորագրելը չէ (և նույնիսկ ոչ էլ հայերեն օրինակի սոսկ գոյության հանգամանքը), այլ այն, որ դրանով ճշտվում է հայոց, վրաց և հույների անցյալին վերաբերող կարևոր մի փաստաթուղթ, գիտական բազմաթիվ ու արժեքավոր տեղեկություններով:

Պրոֆ. Ս. Ղաուխիշվիլու հիմնական գրույթներն առկուցինք վերևում: Գրիգոր Բակուրյանի ազգության ու հայոց՝ Պետրիժոնում լինելու հանգամանքների ճշտումից հետո, կարծում ենք, պրոֆ. Ս. Ղաուխիշվիլու վարկածի որոշ հիմնական գրույթներ ինքնին վերանայվում են, որով հեշտանում է երկրորդ բաժնի բնությունը: Մասնավորապես, եթե Պետրիժոնի հիմնադրումից 20—30 տարի հետո Պետրիժոնի վանք շտապեցին քաղկեդոնական հայեր և այդ կապակցությամբ անհրաժեշտ եղավ լրացնել հունարեն խմբագրությունը, ինչպես Ս. Ղաուխիշվիլին է կարծում, ապա՝

ա) Ինչո՞ւ հունարեն խմբագրությունը վերանայվեց, իսկ վրացերենը՝ ոչ, չէ՞ որ, Բակուրյանի տեղեկությամբ, հունարենը գրվել է երկու օրինակ, որից մեկը գրվելու էր Կ. Պոլսի Պանագի վանքում: Պետրիժոնի վանահայրը ինչպե՞ս կարող էր վերանայել իր ձեռքի տակ եղած հունարեն օրինակը, երբ նրա նախագահափարը Կ. Պոլսում էր, հատուկ պահպանության հանձնված:

բ) Գրիգոր Բակուրյանը խստիվ պարտավորեցնում էր հետևել իր «Սահմանք»-ին և արգելում փոփոխումները: Կհանգղենեի՞ն նրանից 20—30 տարի հետո խախտել նրա բազմիցս կրկնած զգուշացումները (տե՛ս «Սահմանք»-ի հիշատակարանը, § 5):

գ) Եթե նույնիսկ ընդունենք, որ «գրվեց հայերեն» արտահայտությունը հավելում է, նոր պայմաններով կոչված, ապա ի՞նչ կապ ունենին այդ պայմանները Բակուրյանի անձնական ստորագրության հետ, մի՞թե նրա պատվի-

րանները պահող միաբանները 20—30 տարի հետո կկեղծեն վանքի հիմնադրի ստորագրությունը «Խաչեբեն տառերով» ավելացնելով: Բակուրյանի ստորագրության ինչ լեզվով լինելը ամենևին կապ չունի վանքի հետապա վիճակի հետ:

դ) Հունարեն խմբագրության տակ ստորագրել է նաև նրուսաղեմի պատրիարք Սվթիմեոսը, ուրեմն յուրաքանչյուր նոր հավելում պետք է կատարվեր միայն նոր ընդօրինակության մեջ, որը, սակայն, վավերականություն չէր ունենա, որովհետև այստեղ չէին լինի ոչ Բակուրյանի, և ոչ էլ պատրիարքի ստորագրությունները, իսկ ընդօրինակելիս էլ իրավունք չունեին փոփոխումներ անելու, որովհետև Բակուրյանը կտակել էր «արտագրվածը վանահայրն ու միաբանները պետք է ստուգեն և ըստ այնմ տանեն», իսկ պաղատար օրինակը... ոչ մի դեպքում վանքից չի շարժվելու»:

Այս նկատառումները և վերևում բերած մեր եզրահանգումները բացառում են հունարեն խմբագրության հետագա «լրացումը» և ապացուցում ճիշտ ընդհակառակը՝ այն, որ ինչ-ինչ պատճառներով վրացերեն խմբագրությունն է հեռացել նախնական տեսքից: Վրացերենի ոչ սկզբնական լինելու հետևանքն են, բացի նշյալ պարագաներից, տեքստում պահպանված բազմաթիվ հունարանությունները, երբեմն նույնիսկ հունարեն բնագրի ոչ հստակ ընկալումներ: Այսպես, օրինակ, *ἡτοιμασεν* *αὐτοῦ* արտահայտության չեղոք սևուի -*ου* վերջավորությունը (ար. *ἡτοιμασεν*) նույնությամբ պահպանված է վրացերենում (ლოგოსიგობოძის წიგნი)⁵⁶, որ հունարենի բնագիր լինելն է ապացուցում:

Պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլին հունարեն տեքստում որևէ վրացաբանության հետք չի գտել, բացառությամբ *ἡτοιμασεν* (3003) բառի, իսկ հունարանություններ վրացերենում՝ չատ:

Անվանի բյուզանդագետը, կարծում ենք, վերապահությամբ հանդերձ՝ շատ է ընդգծել *ἡτοιμασεν*-ի նշանակությունը: Թերևս անհրաժեշտ էր նկատել, որ *ἡτοιμασεν*-ն վրացական բառ չէ, այլ արաբական-պարսկական *ἡτοιμασεν* *ἑαυτοῦ* *ἡτοιμασεν* հունարենում ու վրացերենում օգտագործված է նույն բառը (*ἡτοιμασεν*), այնուամենայնիվ՝ իմաստավորման նկատելի տարբերություն կա. հունարենի *ἡτοιμασεν* *ἑαυτοῦ* (մենա ասվող, մենա կոչվող) արտահայտությունը բացատրում է, որ «կանաչ սավորը» «մենա» է կոչվում, ուրեմն՝ *ἡτοιμασεν* = գունավոր սափոր: Մինչդեռ վրացերենի «մեկ ուրիշ կանաչ միևայ սափոր»-ը նույն *ἡτοιμασεν*-ին այլ երանգավորում է տալիս, մասնավորապես՝ «գույնի» «գունավոր» (— նկարադարդ, էմալապատ): Եթե հունարենը կաղմելիս վրացերենն արդեն ձեռքի տակ լիներ, ապա չէինք ունենա «կոչվող» (անվանյալ, ասվող) բառը: *ἡτοιμασεν*-ն, ինչպես երևում է, գործածական է եղել վրացերենում, և զարմանալի բան չկա, որ «Սահմանք»-ը գրելիս տեքստ է մտել (հունարենում համապատասխանությունը չունենալու կամ չգտնելու պատճառով) վրաստանում գործածական մի բառ: «Սահմանք»-ում գործածված են հայերեն «տանուտեր» կամ «ոստիկան» (վերջինս փոխառյալ) բառերը, բայց այդ չի նշանակում, թե հունարենը շարագրելիս հայերեն օրինակ են ձեռքի տակ ունեցել:

⁵⁶ Տե՛ս ցյուրացոյ, V, էջ 269—270:

⁵⁷ Լրացուցի, օրինակներն ու նկատումները տե՛ս նույն տեղում, էջ 258—272:

⁵⁸ Տե՛ս *فرهنگ نفیس*, հատ. V:

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ГРЕЧЕСКИХ И ГРУЗИНСКИХ РЕДАКЦИИ «ТИПИКА» ГРИГОРИЯ БАКУРИАНА

მ. მ. მურადიანი

(Резюме)

«Типик» Гр. Бакуриана, известного византийского доместика второй половины XI века и основателя петрицонского грузинского монастыря (в Болгарии), — важнейший первоисточник, сохранившийся на греческом и древнегрузинском языках. Наличие некоторых редакционных разночтений в греческом и грузинском текстах акад. А. Шанидзе и проф. С. Каухчишвили (которому принадлежит выявление, перевод и издание последнего греческого текста) привело к выводу, что «Типик» Бакуриана составлен не на трех (греч., груз. и арм.), а на двух языках (греч. и груз.).

Изучение греческих и грузинских текстов в сопоставлении с данными других источников (Анна Комнина, Матвей Урхайский, «Картлис Цховреба» и др.) привело нас к следующим выводам:

1. Гр. Бакуриан — армянский халкедонит грузинского толка.
2. Грузинский монастырь в Петрицоне был основан для борьбы против монофизитов, богомилов и павликиан, бытовавших в окрестностях Филиппополя. Грузинский перевод трактата Евтимия Зигавина (подготовлен нами к печати по двум спискам) вызван именно этим обстоятельством.
3. Духовная братия Петрицона состояла из грузин и халкедонитов-армян, называвших себя «грузинами».
4. Богослужение в Петрицоне происходило на двух языках — грузинском и армянском, за исключением для последних, очевидно, «Трисвятой песни», во избежание традиционного «*ჩუშღაღა*»-а («иже распныйся за ны»).
5. Петрицонский монастырь — новый очаг грузино-армянского культурно-литературного сотрудничества.
6. Выявленная проф. С. Каухчишвили греческая редакция «Типика» Гр. Бакуриана сохранилась в первоначальном виде, грузинская же редакция (изд. М. Тархнишвили) носит отпечаток поздней обработки.
7. «Типик» Бакуриана составлен на трех языках (греч., груз., арм.) и является достоверным источником по истории деятельности армянских халкедонитов.
8. Марровские положения по вопросам истории армянских халкедонитов грузинского толка подтверждаются новыми фактами.